

Mechitar è una figura eminente, che costituisce l'inizio di una nuova era, nella storia del popolo armeno e del suo risveglio culturale e spirituale. Infatti, egli profondamente permeato di valori nettamente umanistici, è diventato un faro radioso per la cultura armena e, nello stesso tempo, rinnovatore del monachesimo e pioniere del vero ecumenismo.

La Provvidenza lo ha sospinto verso un centro culturalmente e tecnicamente progredito, aperto verso gli orizzonti d'Oriente; e questo contribuì validamente alla riuscita dell'opera sua.

Ben cinquanta sono le opere da lui pubblicate nelle varie tipografie di Venezia, e tra queste alcuni capolavori, come la Grammatica della lingua armena classica, la Bibbia illustrata, e il pregiatissimo Dizionario etimologico della lingua armena, di alta portata umanistica; opere che formarono i capisaldi basilari di un vero rinascimento culturale.

Poi sarebbero da elencare alcuni suoi Commentari sui vari libri della Bibbia, che egli stesso compose, nonché le traduzioni di opere teologiche, come quelle di San Tommaso e di Sant'Alberto Magno, le quali vengono a coronare l'idea vagheggiata da Mechitar, di favorire un profondo risveglio degli studi armeni sul piano teologico e su quello spirituale.

Questo è il tracciato mirabile, sulla cui linea intesero poi camminare i suoi posterì, per restaurare la lingua, la letteratura e la storia della loro lontana ed amata patria.

Anche i legami fra gli Armeni e le diverse Repubbliche della Penisola, che erano stati intensi, sin dal secolo XII^o, hanno preso consistenza dall'arrivo di Mechitar e dei suoi seguaci, i quali pur dediti, per vocazione, al servizio della propria nazione, portarono verso i lidi della Diaspora armena l'attaccamento a Venezia, la devozione alla lingua e alla cultura italiana.

E' un apporto che si è allargato poi quando lo stuolo di laici armeni, studenti ed universitari, formati nel Collegio Moorat-Raphaël di Venezia, si sparse nei vari centri del Medio Oriente, ad irradiare l'orizzonte del rinascimento armeno.

L'intento lungimirante del Fondatore veniva così fruttificato, grazie alla divina Provvidenza, e proprio in virtù di quella affettuosa accoglienza offertaci dalla Serenissima, fin dalle origini.

Quale ringraziamento dobbiamo quindi innalzare a Dio, che ha saputo trarre così mirabilmente, dalle tragiche avventure di guerre e persecuzioni, attraverso il generoso contributo di Mechitar e di Venezia, un sì gran bene per la gente armena e per l'Italia.

Ed è con questi cari pensieri che desideriamo salutare questa onorevole assemblea, in occasione dei festeggiamenti tre volte centenarie.

ՄԻԻԹԱՐ ԱԲԲԱԶՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՅՕՕԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ
ՈՒՂՂՈՒԱԾ
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՍ ԸՆԴՀ. ԱԲԲԱԶՕՐ
ԳՐՊ. ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԱՆԱՆԵԱՆԻ

Ս. Էջմիածին, 16 Հոկտեմբեր 1977

Այսօր ուրախութեամբ ստացանք Ձեր 24 Սեպտեմբերի նամակը:

Սուրբ-Գրական Հայոց աշխարհից եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջոյն եւ օրհնութիւն՝ լուսաբնակ Մխիթար Աբբազօր նուիրական յիշատակին եւ ազգանուէր վաստակին:

Հայ Ժողովրդի Վերածնունդի հորիզոնին վրայ միշտ պայծառօրէն պիտի փայլի նրա անմահ գործը:

Յաւիտենական լոյս եւ խաղաղութիւն՝ Սեբաստացի Մեծ Մխիթարի հոգւոյն

«Յիշեցէ՛ք զառաջնորդս ձեր՝ որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ» (Եբր. ԺԳ. 7):

ՎԱԶԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ամբիլիաս, 18 Հոկտ. 1977

Սրտի խոր գոհունակութեամբ եւ անհուն հրճուանքով ստացանք Ձեր 25 Սեպտ. 1977 թուակիր նամակը, որով կը յայտնէիք թէ ամսոյս՝ Հոկտեմբերի 22 եւ 23 թուականներուն Մխիթարեան Միաբանութեան Հիմնադրին Երնշ. Մխիթար Աբրահամ Թանգեան 300ամեակի փակման հանդիսութիւնները տեղի պիտի ունենան Վենետիկի մայրավանքին մէջ: Այդ առիթով ջերմ փափաք կը յայտնէիք որ Մեր մասնակցութիւնը բերէինք տօնակատարութեանց:

Բնականօրէն Մեզ համար հոգեկան բերկրանքի բացառիկ պահ մը պիտի ըլլար անձամբ մասնակցել հանդիսաւոր տօնակատարութեանց եւ վայելել Ձեր եւ Ձեր նուիրեալ Միաբանութեան հետ միասնաբար այն ոգեւորութիւնը, որ վստահաբար վերանորոգիչ ոյժով պիտի լեցնէ եւ երջանկացնէ բոլոր մասնակցողներն ու ներկայ գտնուողները: Մեզի համար քաղցր առիթ մը պիտի ըլլար նաեւ անձնապէս եւ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան՝ Մեր յարգանքի տուրքն ընծայելու հայ ժողովուրդի բազմատաղանդ զաւակին եւ իր բազմադիւն ծառայութեանց՝ Աստուծոյ եւ Ազգի ու մշակոյթի անդամատանին մէջ: Բայց Մեր պաշտօնի եւ պարտաւորութեանց յատուկ անյետաձգելի դրաղումներու հետեւանքով հարկադրուած ենք մնալ Անթիլիաս:

Ուստի, ցաւով կը յայտնենք որ այդ երջանկալի բախտաւորութիւնը պիտի չունենանք ըլլալու Ձեզ հետ եւ ըմբռնելու այդ առիթով ստեղծուելիք հոգեւոր եւ իմացական մթնոլորտի իւրայատուկ քաղցրութիւնը: Հաճեցէք Մեր այս Հայրապետական գիրը ընդունիլ որպէս մեր մասնակցութեան արտայայտութիւն, յուսալով որ օր մը, առաջիկային, պատեհ առիթը կ'ունենանք անձամբ այցելելու Վենետիկի Ս. Ղազարու մայրավանքը եւ վերստին հաղորդուելու մեր հայրերու ոգեղէն ներկայութեամբը, որ այնքան պերճախօս է մայրավանքիդ մթնոլորտին մէջ:

Մխիթար Սեբաստացին, հայ ժողովուրդէն ծնած, անոր հոգին իր մէջ առողջ պահած եւ Հայց. Ս. Եկեղեցւոյ սուրբ միւռոնով դրոշմուած այն բացառիկ դէմքը հանդիսացաւ որ Աստուծոյ, Հայոց Ազգին եւ հայկական զպրութեան ու մշակոյթի փառքին՝ փառաւոր ծառաներէն մին դառնալու փառաշուք պատուին արժանացաւ: Համազգային եւ համազգայնութեան անվերապահ եւ ամբողջանուէր այն սէրն ու յարգանքը որ իր ծննդեան 300ամեակին առիթով արտայայտուեցաւ՝ արդէն խօսուող վկայութիւնն են իր անձի ու վաստակի բարձրագոյն եւ ազնուագոյն արժեւորման եւ գնահատանքին:

Պահ մը կը խորհինք. — Ի՞նչպէս նոր կեանք ու լեզու պիտի առնէին հայոց մատենագիրները՝ առանց Մխիթարի ու Մխիթարեան Միաբանութեան տիպին ու տառին, պեղումին ու լուսաւորումին:

Ի՞նչպէս անոնք պիտի անդրանցնէին մեր ազգային գնահատութեան սահմանները, հասնելու համար եւրոպական ազգերու արժեւորումին, առանց Մխիթարի եւ իր հոգեանունդ Մխիթարեան վարդապետներու թարգմանչական ու մեկնողական անգնահատելի աշխատութիւններուն:

Ի՞նչպէս հայ ձեռագիրներ որք ու աստանդական պիտի մնային առանց Մխիթարեաններու դուրդուրոտ ձեռքերուն, որոնք մաղաղաթէն անդին մատենաներու հոգիներուն քաղցրօրէն դպան եւ դրչադիրներուն լեզու տուին:

Ի՞նչպէս պիտի փարատէին խաւարի ամպերը հայոց կեանքի այս կամ այն անկիւնին մէջ թանձրացած, առանց Մխիթարեան դաստիարակ միաբաններուն, որոնք քաղաքակիրթ աշխարհի լոյսը ուղեցին խառնել քաղաքակրթութեան համար յաճախ նահատակուած իրենց ազգի զաւակներու հոգիներուն:

Պահ մը կ'երեւակայենք, ի՞նչ պիտի ըլլար հայոց գրքի ճակատադիրը առանց Մխիթարեան տպարանի անվերջ դարձող դլանին...:

Մխիթար Սեբաստացի՝ Աբրահամ ղարձաւ ճառադայթելով: Իր հոգիէն ու գաղափարէն, իր նուիրումի ոգիէն եւ անխոնջ վաստակողի տիպարէն կեանք առած վարդապետներ — ո՞րքան բազմահարուստ անուններ — իր լոյսը տարածեցին. տարածելով՝ բազմացուցին: Դէպի նոր հորիզոններ նայիլ եւ բացուիլ գիտցող, նոր աւիւնով դարաւոր կաղնիին նոր ու թարմ ոյժ ներարկող Բանի այս սպասաւորը այլեւս կը պատկանի Հայոց անմահներու անստուեր փաղանդին:

Յարգա՛նք իր երեքդարեայ մշտադալար յիշատակին: Յարգա՛նք իր հիմնած ուխտեալ ու մեղուաջան Միաբանութեան: Յարգա՛նք զինք ծնած Հայոց յաւերժական ազգին եւ յաւերժադանձ մշակոյթին:

Կիլիկեան Ս. Աթոռիս Վեհափառ Հայրապետ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոս այս երջանկալից առիթով կ'ողջունէ Ձեզ եւ կը մաղթէ որ Մխիթարեան Միաբանութիւնը փառքի նոր դրասանդներ հիւսէ իր պայծառ անունին շուրջ՝ բազմաչէն եւ յարաճուն իրադրոճումներով:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Աստուած որ Մեծն Մխիթարի հոգին երկնային երանական բնակութեան մէջ հրճուեցնէ: Թող բարեաց բաշխողն Աստուած նոր ոյժով զօրացնէ իր հիմնած վանական ուխտը, Մխիթարեան Միաբանութիւնը, որսէսդի 300ամեակի այս չքեղ տօնակատարումը դառնայ նոր մղում նորանոր նուաճումներու:

Մնամ սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ, աղօթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Roma, 18.10.1977

La ringrazio vivamente per il cortese e gradito invito alla cerimonia celebrativa del terzo centenario della nascita del Fondatore della Congregazione Mechitarista Abate Mechitar. Nella impossibilità di essere presente, desidero esprimere fervidi voti augurali di lunga feconda opera della Congregazione per affermazioni ideali cristiani. Deferenti saluti.

GIULIO ANDREOTTI
Presidente del Consiglio
dei Ministri

* * *

Հռոմ, 19 Հոկտ. 1977

Շատ շնորհակալ եմ որ հաճած էք ինձի իմացնել եւ զիս հրաւիրել Երանաշնորհ Մխիթար Աբրահամ Թանգեան Գ. դարադարձի հանդիսութիւններուն, որոնք պիտի կատարուին Վենետիկ ամսոյս 22-23ին:

Սիրով պիտի ուզէի միանալ Ձեզի՝ մեր Աղգին այնքան մեծ բարերարը պանծացնելու համար. սակայն, ինչպէս գիտէք, «հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար»: Այսուհանդերձ կը հրճուիմ հոգւով եւ կը միանամ Ձեր Մխարանութեան ուրախութեանց՝ այս նուիրական օրերուն:

Հեռուէն պիտի ընծայեմ անոր յիշատակին աղօթքիս տրիտուրը, խնդրելով Աստուծմէ որ Երանաշնորհ Հիմնադիրը միշտ կենդանի մընայ իր բաղձարդիւն ընտանիքին մէջ:

Վստահ եմ որ Աստուած մեծ բարիքներ կը վերապահէ, յօգուտ մեր սիրելի Հայ Ժողովուրդին, Մխիթարայ դաւակներու առաքելական եռանդին ի վարձատրութիւն:

Այս զղացումներով է որ կ'օրհնեմ յիշատակը Երանաշնորհ Մեծ Սեբաստացիին ու կը մաղթեմ որ օր մը զինքը տեսնենք խորաններու վրայ:

Հաճեցէք, Գերապայծառ Աբրահայր, ընդունիլ լաւագոյն բարեմաղթութիւններս Ձեզի եւ Ձեր Մխարանութեան եղբայրներուն:

ԻԳՆԱՏԻՈՍ Պ. ՊԱԹԱՆԵԱՆ
Պատրիարք

* * *

Jerusalem, 19.10.1977

On the solemn occasion of tricentenary anniversary of birth festivities of the great Founder of your devoted Order Abbot

Mekhitar of blessed memory we heartfully express our joyful and warmest congratulations wishing to your Grace continued health and prosperity and many fruitful activities to your selfless and dedicated Congregation.

PATRIARCH YEGHISHE DERDERIAN

* * *

Իսթանպուլ, 11 Հոկտ. 1977

Սիրով ստացանք Ձեր 25 Սեպտ. 1977 թուակիր գրութիւնը, որով նախ կը հաղորդէիք, թէ հանդերձեալ էք մեծ հանդէսով կատարել Ձեր Մխարանութեան մեծանուն Հիմնադիրն՝ Երանաշնորհ Մխիթար Աբրահամ Թանգեան երեքհարիւրամեակի փակման տօնախմբութիւնը, Հոկտ. 22-23 թուականներուն. ապա կը հրաւիրէիք զմեզ ներկայ լինելու սոյն հանդիսութեանց: Ո՛րքան պիտի փափաքէինք արդարեւ Ձեր հիւրն ըլլալ այդ օրերուն՝ ըմբռնելու համար այդ հանդիսութեանց ընձեռելիք մտքի եւ հոգիի շնորհները, ու միաժամանակ վայելելու համար, գէթ քանի մը օրեր, այն խաղաղութիւնը՝ զոր միջավայրը կ'ընծայէ իր հիւրերուն: Սակայն կը ցաւինք ըսել, որ ժամանակները եւ այլ հասկնալի պարագաները թոյլատու պիտի չըլլան ընդառաջելու Ձեր հրաւերին եւ գոհացնելու Ձեր եւ մեր փափաքները:

Այսուհանդերձ գէթ գրով Ձեր հետ ըլլալու համար՝ նախ կը շնորհաւորենք Ձեր նախաձեռնութիւնը այդպիսի գրեթէ միջազգային չափանիշի վրայ կազմակերպելու սոյն փակման հանդիսութիւնը, ծանօթացնելու համար նաեւ մեր փոքր ածուի սահմաններէն անդին դառնալու հաւաքականութեանց՝ Մեծ Սեբաստացիին անձն ու դէմքը, եւ այն ամէնը, որոնց արծարծումին ու մշակումին ընծայաբերումը եղաւ իր ամբողջ կեանքը: Եթէ ուզէինք մեր մտածումները ընկոյզի կճեպի մը մէջ համադրելով մատուցել առաքելի Աբրահամ մասին, պարզապէս պիտի հաստատէինք, որ Մխիթար ԺԸ. դարու առաջին կէսը լեցնող մեր պատմութեան երեք գլխաւոր սիւններէն մէկն է, Յովհաննէս Կոլոտ Կ. Պոլսոյ պատրիարքին եւ Գրիգոր Շղթայակիր Երուսաղէմի պատրիարքին հետ, որոնք չըջանին ամէնէն անբասիր, ամէնէն նուիրեալ ու ամէնէն վաստակաշատ հոգեւոր գործիչները եղան: Մխիթար սակայն բախտաւորութեամբ անով, որ կըրցաւ հիմքը դնել կազմակերպեալ հոգեւոր կեանքի եւ մշակոյթի շարժումի մը որ ցայսօր կը շարունակէ իր գոյութիւնը:

Վենետիկի լճաջաղաքին մէջ ան հաստատեց լուսաւորութեան 'կեդրոն մը, ուր ինք եւ իր յաջորդները՝ վայելելով բարիքները Եւրոպայի ընձեռած խաղաղ պայմաններուն, ու մանաւանդ օգտագործելով Արեւմուտքի ընծայած դիւրութիւնները՝ մեծապէս նպաստեցին Հայ

Գիրի, Գրականութեան ու Գրակարգութեան լայն տարածման մեր ժողովուրդի գրեթէ բոլոր խաւերուն մէջ:

Իր գործունէութեան մղում տուող հիմնական ոյժը Սէրը ու ծառայութեան ոգին էր. նախ եւ ամէնէն առաջ Սէրը ու ծառայութիւն հանդէպ Աստուծոյ. եւ ապա՝ Սէրը ու ծառայութիւն իր ժողովուրդին: Ինչպէս բոլոր մեծ ու ընտրեալ հոգիներուն պատահած է, այնպէս ալ Մխիթար ունեցաւ, յատկապէս իր գործին սկզբնաւորութեան շրջաններուն, խոչընդոտներ, հակառակութիւններ ու հալածանքներ, որոնց բոլորին յաղթահարեց շնորհիւ իր տոկուն հաւատքին ու անյողգող կամքին:

Աղբուրդին կը սնահատենք իր մշակութային մեծ վաստակը եւ յարգանքով կը խոնարհինք անոր առջեւ: Կ'օրհնենք իր անմեռ յիշատակը, ու կը մաղթենք որ Դուք ու Ձեր Միաբանութիւնը շարունակէք նոյն նուիրումով ու նոյն եռանդով Ձեր մեծ սպասը Հայ մշակոյթին:

Ողջունիւ եղբայրական սիրոյ
Ազօթակից

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Պատրիարք Հայոց Թուրքիոյ

* * *

Roma, 23. 7. 1977

Per incarico dell'Em.mo Cardinal Prefetto della Sacra Congregazione per le Chiese Orientali, attualmente assente da Roma, in risposta alla Sua del 4 luglio c.m., sono a ringraziarLa per l'invito rivoltoagli in occasione della chiusura dei festeggiamenti del terzo centenario della nascita del Ven. P. Mechitar, Fondatore di codesta Congregazione religiosa.

Sua Eminenza è dolente di non poter intervenire di persona alle solenni manifestazioni della fausta commemorazione, per impegni di ufficio, ma mi ha affidato il gradito incarico di assicurarLa che per quella circostanza sarà spiritualmente presente unitamente a quanti parteciperanno alle cerimonie in programma.

Con sensi di distinto e religioso ossequio, mi valgo dell'occasione per confermarvi,

devotissimo nel Signore
Arcivescovo MARIO BRINI
Segretario della S. Congregazione
per le Chiese Orientali

Թեհրան, 11 Հոկտ. 1977

Սրտի անհուն շնորհակալութեամբ ստացայ Միաբանութեանդ հրաւերը որով յայտնում էիք թէ Երնշ. Մխիթար Աբբաճօր ծննդեան երրորդ դարադարձի ոգեկոչումի հանդէսը տեղի պիտի ունենայ Շաբաթ՝ 22 Հոկտեմբերին եւ այդ առիթով պաշտօնական բանախօսութիւնը պիտի կատարէ Վսեմ. Ծիր. Յովհ. Վիլպրանտս, ու խօսք պիտի առնեն նաեւ Վենետիկի քաղաքապետը եւ միաբանական ուխտիդ Ընդհ. Աբբաճայրը:

Վստահ ենք թէ Երնշ. Մխիթար Աբբաճօր յիշատակին արժանալի հանդիսութիւններ եւ գոհարանական արարողութիւններ պիտի կատարուեն:

Երնշ. Մխիթար Աբբաճայրը ոչ միայն իր ողջութեան բացառիկ մեծութիւն եղաւ եւ առանձինն բաղմաթիւ յիշատակութեան արժանի դործեր կատարեց, այլ նաեւ իր վախճանումից մինչեւ այսօր եւ տակաւին յետոյ պիտի շարունակէ հանդիսանալ այն տիպար անձնաւորութիւնը, որ յարատեւ եւ տքնաջան աշխատանքի շնորհիւ հսկայական նուաճումներ կատարեց:

Իր դրական, լեզուարանական եւ բանասիրական վաստակը լաւագոյն ապացոյցն է իր կատարած աշխատանքին, իսկ Մխիթարեան Միաբանութեան հիմնումը արդէն իսկ պերճախօս վկայութիւնն է Մխիթար Աբբաճօր նուաճումների:

Մեր մաղթանքն է, որ յաւերժական լոյսերի մէջ ապրող Երանաշնորհ Մխիթար Աբբաճօր ստեղծագործ աշխատասիրութեան ոգին օրինակ հանդիսանայ քոյրին եւ Մխիթարեան Միաբանութիւնը շարունակէ մեր աղբային կեանքին օգտակար հանդիսանալ դրական, բանասիրական երկերի հրատարակութեամբ, ինչպէս նաեւ կրթական հաստատութիւնների միջոցաւ:

Ցանկանում եմ, որ Մխիթարեան Միաբանութիւնը աճի եւ բարելաւաճի եւ միշտ գործօն ներկայութիւն հանդիսանայ մեր հանրային եւ մշակութային կեանքումը:

Եղբայրական սիրոյ ողջունիւ՝ աղօթակից

ԱՐՏԱԿ ԱՐՔՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ Թեհրանի Հայոց Թեմի

* * *

Istanbul, 17. 10. 1977

Spiritualmente presente solenni celebrazioni commemorative tricentenario nascita servo di Dio Abate Mechitar, ricordiamo con animo riconoscente memoria grande monaco, pioniere nostro Rinascimento monastico e culturale, apostolo riavvicinamento

comunità separate, porgiamo fervidi auguri, vitalità, provvidenziale Congregazione.

Mons. HOVHANNES CIOLAKIAN
Arciv. degli Armeni Cattolici

* * *

Երեւան, 7 Դեկտ. 1977

Դէպի Հայաստան մեկնելէս օր մը առաջ, շնորհակալութեամբ ստացայ Ձեր աղնիւ հրաւերը՝ մասնակցելու Երանաշնորհ Մխիթարի ծննդեան երեքհարիւրամեակի կապակցութեամբ մեծ հանդէսին: Ի սրտէ վը մաղթեմ որ Կրօնի եւ Հայութեան ա՛յնքան սատարող Մխիթարեան Միաբանութիւնը կարենայ տօնել ուրիշ բազմաթիւ հարիւրամեակներ:

Սիրոյ ջերմ ողջունիւ եւ յարգանք, մնամ Ձեր Գերապայծառ Տէրութեան աղօթակից՝

ՊՕՂՈՍ Արքայսկ. ԳՈՒՍԱՆ

Առաջնորդ

Դամասկոսի Հայ Կթղ. Թեմին

* * *

Le Caire, 19. 10. 1977

Uni de cœur festivités tricentenaire, forme meilleurs vœux avenir aussi fructueux que passé par intercession vénéré Fondateur.

Mons. RAPHAEL BAYAN
Evêque des Arméniens Catholiques

* * *

Գամիշլի, 15 Դեկտ. 1977

Շնորհակալ եմ Մխիթար Աբբայի ծննդեան 300ամեակի տօնակատարութեան փակման օրուայ առթիւ Ձեր ուղղած հրաւերին համար, որուն իր ժամանակին չկրցայ պատասխանել, որովհետեւ հոս ուշ հասաւ, եւ հասած թուականին բացակայ էի քաղաքէս: Ուստի, ընդունեցէք, այս առթիւ, յատուկ շնորհաւորութիւններս ու աղօթքս արդիւնաւատ Միաբանութեանդ յաջողութեան համար՝ աղգային եւ առաքելական դետիներու վրայ:

Աղօթակից եւ Ս. Զոհերու միութեամբ՝

Ձերդ

ԳՐԻԳՈՐ Եպսկ. ԱՅՎԱԶԵԱՆ

Առաջնորդ

Ճեզիրէի Հայ Կթղ. Թեմին

Թեհրան, 8 Փետր. 1978

Ճշմարիտ վայելքով կարդացի զանազան յօդուածները «Բազմավէպ»ի եւ «Հայ Ընտանիք»ի մէջ, որոնցմէ կը յայտնուի թէ Մխիթար Աբբահայր վերջին դարերու մեծագոյն Հայն է, որուն շուրջ անվերապահօրէն կը համախմբուի մեր բովանդակ Ազգը:

Մխիթար Երանաշնորհն ոչ միայն Ձեր բազմարդիւն Միաբանութեան, այլ նաեւ ամբողջ Հայութեան պարծանքն է, քանի որ ամբողջ Հայութիւնը զայն այլեւս կը ճանչնայ իբրեւ «Երկրորդ Լուսաւորիչ»։ Կարելի է ըսել նաեւ, թերեւս աւելի ճշգրիտ կերպով, «Երկրորդ Մեսրոպ» մը:

Յաւով՝ չկրցայ մասնակցել, հակառակ բոլոր բաղձանքիս, դարադարձի հանդիսութիւններուն, Թեմիս ստիպողական գործերուն պատճառաւ, մանաւանդ որ՝ մէկ ամիս ետք՝ պէտք էի բացակայիլ, Հռոմի կանոնական Յանձնախումբի աշխատանքներուն համար:

Կը մաղթեմ պայծառութիւն եւ բարգաւաճում Մխիթարեան զոյգ Միաբանութիւններուն, որպէսզի միշտ աւելի յաջողապէս շարունակէք անմահ Երանաշնորհ Մխիթարի բարոյական եւ մշակութային գործը, ի փառս Աստուծոյ եւ ի շինութիւն մեր սիրելի Հայ Ազգին:

Աղօթակից

ՎԱՐԴԱՆ Եպսկ. ԹԵՔԵՆԱՆ

Առաջնորդ

Իրանի Հայ Կաթողիկէ Թեմին

* * *

Փարիզ, 12 Հոկտ. 1977

Ամսոյս սկիզբը, Գեր. Հ. Նիկողոս Վ. Քեհիայեանի ձեռքով ըստացայ Գեր. Հ. Բարսեղ Վ. Չեփիճեանի 26. 9. 77 թուակիր նամակը, որով Ձեր Գերապայծառ Տէրութեան եւ Գեր. Գեր. Միաբան Հայրերու անունով զիս կը հրաւիրէր Երանաշնորհ Մխիթար Աբբահօր ծննդեան 300ամեակի հանդիսաւոր տօնակատարութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան 22 եւ 23 Հոկտեմբերին, Վենետիկի մէջ: Խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ ինծի եղած մեծ պատիւին համար: Սակայն, բազմաթիւ զբաղումներն ու յանձնառութիւններս այս օրերուն չեն ներեր ինծի, դժբախտաբար, ներկայ գտնուելու նուիրական այդ հանդիսութիւններուն: Եռանդուն աղօթքով եւ եղբայրական սիրով կը միանամ Ձեզի եւ կը հայցեմ Ձեր եւ ամէնուս վրայ Մեծն Մխիթարի շնորհքն ու հոգին:

Եղբայրական սիրոյ ջերմ ողջոյններուս հետ, բարեհաճեցէք ըն-

դունիլ, Արհապատիւ Գերապայծառ Տէր, խորին մեծարանքիս հաւաստիքը:

Ձերդ աղօթակից

ԳՐԻԳՈՐ ԵԱՍ. ՂԱՊՐՈՅԵԱՆ

Առաջնորդ

Ֆրանսայի Կաթողիկէ Հայոց

* * *

Athènes, 23. 10. 1977

Dispiacente assenza commemorazione, unito preghiera, auguriamo prosperità fedeli figli venerabile Mechitar, gloria nazionale Armena.

Mons. HOVSEP KOYOUNIAN
Ordinario degli Armeni Cattolici
di Grecia

* * *

Երեւան, 12 Հոկտ. 1977

Մաշտոցի անուան Մատենադարանի Տնօրինութեան եւ գիտական անձնակազմի անունից ջերմագին շնորհաւորանքներ ենք յղում Ձեզ, նոր հայագիտութեան ռահվիրայ, բաղմարեղուն գիտնական եւ մանկավարժ Մխիթար Սեբաստացու երեքհարիւրամեակին նուիրուած հանդիսութիւնների առիթով, բարձր գնահատելով Մեծ Սեբաստացու եւ նրա գիտնական յետնորդների վաստակը՝ հայ ժողովրդի հազարամեայ պատմութեան ու մշակոյթի ուսումնասիրութեան մարդում: Ձեզ հետ միասին Մենք ոգեկոչում ենք նրա յիշատակը եւ յոյս յայտնում որ այսուհետեւ աւելի են սերտանալու Սովետական Հայաստանի գիտական Հաստատութիւնների ու Մխիթարեան անդաստանի այսօրուայ մշակների գիտական կապերը, ի շահ հայագիտութեան հետադայ զարգացման:

Մաշտոցի անուան Մատենադարանի Տնօրէն
(Հեռագիր) Ակադեմիկոս
ԼԵՒՈՆ ԽԱԶԻԿԵԱՆ

* * *

Երեւան, 12 Հոկտ. 1977

Շնորհակալութիւն եմ յայտնում Մխիթարեան Միաբանութեան հիմնադիր Մեծ Սեբաստացու ծննդեան երեքհարիւրամեայ յորելեանի փակման հանդիսութիւններին մասնակցելու հրաւերի համար: Ցաւում եմ, որ առողջական վիճակս թոյլ չի տալիս հեռաւոր ճամբորդութիւններ կատարելու:

Օգտուելով պատեհ առիթից հաճելի պարտականութիւն եմ կատարում՝ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական անձնակազմի անունից ջերմագին շնորհաւորանքներ յղելով անձամբ Ձեզ եւ Մխիթարեան Միաբանութեան բոլոր անդամներին, նուիրեալ հայրենասէր, բաղմարեղուն գիտնական ու մանկավարժ, նոր հայագիտութեան ռահվիրայ Մխիթար Սեբաստացու յորելեանի առիթով:

Օտար բռնակալների ծանր լծի տակ հեծող իր հայրենիքում գործունէութեան ասպարէզ չգտնելով՝ իր ժողովրդի լուսաւորութեան դատին նուիրուած երիտասարդ Մխիթարը խարիսխ նետեց Ադրիատիկի երջանիկ այդ ափերին, եւ չըջապատելով իրեն շնորհաշատ աշակերտներով՝ հսկայական դործ կատարեց Հայոց լեզուի ուսումնասիրութեան բնագաւառում. ստեղծեց մեծարժէք բառարաններ, հիմք դրեց Հայոց պատմութեան գիտական ուսումնասիրութեան, իր հայրենակիցներին հաղորդակից դարձրեց եւրոպական գիտութեան նուաճումներին:

Մեծ է նրա վաստակը նաեւ ձեռագիր մատենաների ու թանգարանային իրերի հաւաքման, հայաշատ վենտրոններում զպրոցներ հիմնադրելու եւ ուսումնական նոր ծրագրեր մշակելու ասպարէզներում:

Այս երեք դարերի ընթացքում աշխարհում շատ բան է փոխուել: Մխիթարի հայրենիքի երջանիկ բաժինը՝ դառնալով Սովետական Հայաստան, եղբայր ժողովուրդների ընտանիքում վիթխարի քայլերով առաջ է ընթանում՝ դառնալով զարգացած տնտեսութիւն եւ փառաւոր մշակոյթ ունեցող ծաղկուն մի երկիր: Հայաստանն այժմ ունի իր Գիտութիւնների Ակադեմիան՝ պատմութեան, գրականութեան, լեզուի, հնագիտութեան, փիլիսոփայութեան եւ արուեստների ուսումնասիրութեան կենտրոններով, Պետական համալսարան եւ տասնամիւլիկ լարձրագոյն ուսումնական հաստատութիւններ: Երջանիկ նեակ այլ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների ու իր պատմութեան, ժողովուրդը, որ տէրն է այժմ իր ճակատագրի ու իր պատմութեան, խորին յարգանքով ու մեծարանքով է յիշում իր հին ու նոր երախտաւորներին, որոնց շարքում պատուաւոր տեղ է զբաղում նաեւ մեծ ուսուցիչ Մխիթար Սեբաստացին:

Ձեզ հետ միասին ոգեկոչելով նրա յիշատակը, յոյս ենք յայտնում, որ այսուհետեւ աւելի են սերտանալու մայր հայրենիքի գիտական կենտրոնների ու Մխիթարի ստեղծած միաբանութեան այսօրուայ մշակների գործարար կապերը՝ ի շահ մեր հին մշակոյթի խորազնին ուսումնասիրութեան եւ հետադայ զարգացման:

Մաշտոցի անուան Մատենադարանի Տնօրէն
Ակադեմիկոս
ԼԵՒՈՆ ԽԱԶԻԿԵԱՆ

Երևան, 12 Հոկտ. 1977

Հաճոյքով ստացանք Ձեր հրաւերը՝ մասնակցելու Ձեր Միաբանութեան երջանկայիշատակ հիմնադրի, բազմաջան Հայագէտ Մխիթար Սեբաստացու երեքհարիւրամեակի տօնակատարութեան փակման հանդէսին:

Մխիթար Սեբաստացու եւ նրա հիմնադրած միաբանութեան հետ է՝ կապուած Հայ հին մատենագրութեան, Հայոց լեզուի դիտական ուսումնասիրութեան, աշխարհաբար պարբերականների սկզբնաւորումը: Մխիթար Սեբաստացին եւ Մխիթարեանները անուրանալի վաստակ ունեն բազմաթիւ մատենագիրների երկերի տպագրութեան, յունա-հռոմէական մատենագրութեան եւ արեւմտաեւրոպական դրականութեան նմոյշների թարգմանութեան ու հրատարակման գործում:

Ըստ արժանւոյն գնահատելով Մխիթար Սեբաստացու արդիւնաւոր ծառայութիւնը Հայագիտութեանն ու Հայ մշակոյթին, մեր համալսարանը Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի հետ համատեղ դիտական նստաշրջան կազմակերպեց ապրիլ ամսին՝ նուիրուած Մխիթար Սեբաստացու ծննդեան 300ամեակին:

Հաւաստելով, որ Մխիթարի հետեւորդները՝ նախորդների նման անխոնջ ջանադրով ծառայում են Հայագիտութեան, Հայ մշակոյթի զարգացման, հաւատացած ենք՝ Ձեր եռանդը չի պակասի Հայրենանուէր այդ գործի մէջ:

Հանդիսաւոր տօնակատարութիւնների փակման հանդէսի առթիւ ջերմ շնորհաւորութիւններ ենք յղում հանդէսի կազմակերպողներին, ղեկուցողներին եւ այլ գործակիցներին՝ Հայրենի մշակոյթի մեծ երախտաւորի յիշատակը անմոռաց պահելու համար:

ՀՍՍՀ ԳԱ Ակադեմիկոս

Ս. Ա. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Երևանի Պետ. Համալսարանի Ռեկտոր

* * *

Նիւ Եմք, 11 Հոկտ. 1977

Ձգածուած ենք Ձեր Սեպտեմբեր 25, 1977 թուակիր նամակին համար, որով մեզ կը հրաւիրէիք մասնակցելու Մխիթար Աբրահօր 300-ամեակի տօնակատարութեան շարքի փակման հանդիսութեան: Կը ցաւինք որ մեր բազմազգադութեան պատճառաւ՝ պիտի չկարողանանք դրապէս պատասխանել Ձեր սրտադին հրաւերին եւ անձամբ մասնակցել Հոկտեմբեր 22 եւ 23 թուականներուն համար ծրագրուած հոգեպարար հանդիսութեան:

Ներկայ տարուան ընթացքին, յիշեալ տօնակատարութեանց կապակցութեամբ, մենք քանիցս առիթը ունեցանք մեր յարգանքն ու հիացումը յայտնելու Մխիթար Աբրահօր տեսիլքին եւ անոր գործը շարունակող անձնուէր հետեւորդներուն նկատմամբ:

Այս պատեհութենէն օգտուելով կ'ուզենք անգամ մը եւս մեր դնահատանքն յայտնած ըլլալ Մխիթարեան Հայրերու կրթական, դրական եւ ազգային դարաւոր գործունէութեան: Մասնաւորաբար ուրախութիւն պատճառեցին մեզի Ձեր կազմակերպած փակման հանդիսութիւնները, որոնք դուրս գալով Հայկական շրջանակէ՝ կը ստանան ընդհանրական ընդգիծ, վատիկանի ներկայացուցիչին եւ վենետիկի քաղաքապետին մասնակցութեամբ:

Կը մաղթենք որ այս վարեւոր հանդրուանը ուխտի նորոգութեան եւ ուժերու լարումի նոր առիթ մը հանդիսանայ Միաբանութեանը համար, որպէսզի ան կարենայ անմահն Մխիթար Սեբաստացիի լուսաւոր առաքելութիւնը հասցնել գալիք ժամանակներու:

Ձեզի մաղթելով ամբողջական յաջողութիւն, կը մնանք,

Ոորին յարգանք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ Հ.Բ.Ը. Միութեան

* * *

Lisbonne, 17. 10. 1977

De retour de voyage dans le Golfe d'Arabie, j'ai trouvé votre aimable lettre du 3 Octobre m'invitant à participer aux solennités de clôture du troisième centenaire de la naissance de votre Bienheureux Fondateur, l'Abbé Mekhitar, et j'en ai été très touché.

Toutefois, je regrette infiniment de ne pouvoir m'y rendre aux dates indiquées des 22 et 23 Octobre; mes engagements ne me permettant pas de quitter Lisbonne dans les prochaines semaines.

Croyez bien, Monsieur l'Abbé Général, que je serai toutefois présent par la pensée et vous adresse à cette occasion mes plus sincères félicitations pour la grande œuvre que vous accomplissez.

Veillez agréer, Monsieur l'Abbé Général, l'expression de mes sentiments les plus respectueux.

Fondation Calouste Gulbenkian
ROBERT GULBENKIAN

Սեւրը (Փարիզ), 18 Հոկտ. 1977

Մխիթարի երանաւէտ լոյսին պայծառ շողերը յաւէտ փայլին Հայոց երկնակամարին վրայ: Եղբայրական մասնակցութեամբ՝

Հ. ՍԵՐՈՐԲԷ ԱԳՂԼԵԱՆ

Հ. ՌԱՓԱՅԷԼ ԱՆՏՈՆԵԱՆ

Ի դիմաց Սամուէլ Մուրատեան վրժրմ.ի

* * *

Պուէմոս Այրէս, 19 Հոկտ. 1977

Հոգեւին կը մասնակցինք մեր Երնչ. Հիմնադրին յորեկեանի մեծ հանդէսին, սրտազին մաղթանքներով:

Հ. ԽՈՐԷՆ ՏԻԼԻՉԵԱՆ

Հ. ԵՂԻՇԷ ԶՈՒԼԵԱՆ

Ի դիմաց Պ. Այրէսի Մխիթարեան վրժրմ.ի

* * *

Istanbul, 20. 10. 1977

Auguri cordialissimi.

P. AGOPOS POSBEYEKIAN

P. ANDON GIVANYAN

Ի դիմաց Իսթանպուլի Մխիթարեան վրժ.ի

* * *

Alep, 20. 10. 1977

Participons avec joie jubilee Fondateur. Souhaitons béatification Mekhitar. Prospérité, activité fructueuses.

P. EPHREM DER-GHAZARIAN

P. ARISDAKES MANOUKIAN

Ի դիմաց Հալէպի Մխիթարեան վարժարանի

* * *

Միլանոյ, 22 Հոկտ. 1977

Ս. Ղազարի վանք եւ Մխիթար Սեբաստացի Աբրահամը: Այս երկու նուիրական անունները այնքան են սերտորէն իրարու զուգորդուած, որ առանց մէկին՝ միւսը կարելի չէ պատկերացնել. եւ այդ շատ բնական է ու տրամաբանական, քանի որ Մեծն Մխիթարի մտքի ու հոգիի երկունքէն է որ ծնունդ է առած փառաւոր անցեալ ունեցող վանական այս Հաստատութիւնը:

Մօտ երկուքուկէս դար առաջ, քրիստոնէական հաւատքի հուրը սրտին մէջ եւ Հայ դպրութեան ու մշակոյթին սէրը հոգիին մէջ,

Սեբաստացի Մխիթար վարդապետ, սլանդուխտի ցուպը ձեռքին, հաղար ու մէկ զրկանքներու եւ տառապանքներու ենթարկուելէ յետոյ, ութ աշակերտներու դուլին անցած, կայք հաստատեց լուսաւոր Եւրոպայի գողտրիկ մէկ անկիւնը դառնուող աննշան ու կիսաւեր փոքրիկ կղզիի մը վրայ եւ շատ չանցած, շնորհիւ իր աստուածատուր ձիրքերուն, եռանդին ու ժրաջան աշխատանքին, նպաստաւոր պայմաններ ստեղծեց միաբանութիւն հաստատելու եւ վանք հիմնելու, գերագոյն նպատակ ունենալով Աստուծոյ եւ ազգին ծառայել՝ Հայ դպրութեան եւ մշակոյթին միջոցաւ. եւ անշուշտ իր տեսիլը մարմին առաւ վանքի, դպրանոցի, տպարանի, ձեռագրաց մատենադարանի ձեւին տակ եւ ապա աւելի քան երկու հարիւր տարիներ Մխիթարեան Միաբանութիւնը անդուլ ջանքերով ստեղծեց հոգեւոր, գրական, դիտական, կրթական, պատմաբանասիրական, լեզուաբանական, մատենադրական, տպագրական արուեստի արժէք ներկայացնող այնպիսի գործեր, որոնք պատիւ պիտի քերէին որեւէ ժողովուրդի եւ որոնց առջեւ ամէն Հայ յարգանքով կը խոնարհի:

Մխիթար Աբրահամը ոչ միայն եղաւ վարչապետ կազմակերպիչ, այլ նաեւ հմուտ դաստիարակ ու կրթական գործիչ եւ իր հովանիին ու շունչին տակ աճած սերունդը իր հերթին բեղմնաւորուեցաւ բազում արդիւնք տալով՝ Աւետարանի խօսքին համաձայն. «Ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր»:

Այսօր երբ երախտադէտ սրտով կ'ողեկոչենք Մխիթար Աբրահամ ծննդեան Գ. դարադարձը, նաեւ կ'աղօթենք որ Բարձրեալն Աստուած անփորձ եւ անսասան պահէ Ս. Ղազարի վանքը իր բոլոր Հաստատութիւններով, որպէսզի ստեղծուելիք նորանոր արժէքներով՝ ա'լ աւելի հարստանայ Հայ հոգեւոր դպրութեան ու մշակոյթի դանձարանը: Այն ատեն, վստահ եմ, Մեծն Մխիթարի հոգին աւելի պիտի հրճուի երկնային երանութեան մէջ եւ Հայ ժողովուրդը աւելի պիտի փառաւորուի այստեղ, երկրի վրայ:

Ի սրտէ կը մաղթեմ, որ Մեծն Սեբաստացիի հայկական ոգին միշտ սաւառնի Վենետիկի երկնակամարին վրայ:

ՍԱՐԳԻՍ ՔԶՆՅ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Հոգեւոր Հովիւ Միլանոյի Հայոց

* * *

Միլանոյ, 18 Հոկտ. 1977

Հայ Աշխարհը, Հայոց Աղդը եւ համայն Հայ ժողովուրդը 1976 Փետրուար 7էն ի վեր կը աօնախմբէ, միասնաբար Մխիթարեան Միաբանութեան հարադատ անդամներուն, իրենց Երանաշնորհ Հիմնադրին՝ Մխիթար Աբրահամ ծննդեան պանծալի 300ամեակը, ի Վենետիկ եւ ամէնուրեք ուր կ'ապրի Հայու շունչը:

Միլանոյի Ս. Քառասուն Մանկունք Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մովսէսը, Հոգաբարձութիւնը եւ Հովիւը անհուն երախտադիտութեամբ խոնարհելով Մեծ Սեբաստացիի Հոգիին առջեւ՝ կը մասնակցին այն մեծ ցնծութեան որ արդարացիօրէն կ'ողողէ սիրտը բոլոր անոնց, որոնք իրենց կեանքը ի սպաս դրած են գործադրութեանը համար այն իտէալներուն, որոնցմով առկուն ճամբայ ելաւ Մխիթար, իր անունը առ յաւէտ քանդակելով Հայոց պատմութեան, Հայ Մշակոյթի Վերածնունդին, Հայ Ժողովուրդի քրիստոնէական դաւանութեան իրականութեանց վրայ, ներկայանալով քացառիկ ու եզակի Դէմք: Արդարեւ, Մխիթարի կատարած գործը եւ թողած վաստակը այնքան մեծ է, որ ամէն Հայ յարգանքով կը խոնարհի անոր յիշատակին առջեւ եւ այսօր կը մասնակցի նշանակալից ցնծութեան:

Այս բերկրալից յորեկեանին առիթով հաճեցէք ընդունիլ, Գերապաճառ Աբրահայր, Մեր Հաւատացեալ Համայնքին ջերմագին բարեմաղթութիւնները:

Թող բարձրեալն Աստուած հաստատուն պահէ եւ օրհնէ Մխիթար Աբրահայր հիմնած Ս. Ղազարի վանքը եւ անոր ժրջան միաբանները Ո.Կ.Վ.Ս.:

Յաւէտ լոյս եւ յարգանք իր խնկելի յիշատակին:

Սիրալիր ողջունիւ եւ խորին յարգանք,

Ի դիմաց Հոգաբարձութեան
ԲԺ. ՏԻԳՐԱՆ ԱԼԵԳՍԱՆԵԱՆ

* * *

Venezia, 17. 10. 1977

Ringrazio vivamente per il gentile invito alla celebrazione del III° Centenario della nascita del Ven. Abate Mechitar.

Sarò presente alla Commemorazione di Palazzo Ducale; temo invece mi sarà impossibile partecipare alla celebrazione di Domenica 23 ottobre nell'Isola di S. Lazzaro, per impegni precedenti.

Mi tenga comunque presente con una viva preghiera e con l'augurio di un sempre maggiore incremento della benemerita Comunità Armena.

Con distinti ossequi.

dev.mo

Sac. GIUSEPPE BOSA

Vic. Gen. del Patriarcato di Venezia

* * *

Roma, 27. 10. 1977

Ricevo e leggo con molto piacere la Sua stimatissima lettera del 24 settembre u. s. con la quale Ella con nobili espressioni,

che non mi si addicono, ha avuto la paterna cortesia di invitarmi alle solenni cerimonie dei festeggiamenti per il 3° centenario del Ven. Mechitar, Fondatore di codesta Congregazione religiosa.

Volentieri avrei aderito al Suo lusinghiero invito, ma ragioni d'ufficio mi porteranno ai primi di ottobre in Grecia.... Mi vedo quindi costretto a prendere parte soltanto spiritualmente, ma con tutta la gioia del mio animo alle cerimonie che si terranno in codesto venerando monastero.

In unione di preghiere e con l'augurio che tutto possa svolgersi come programmato a gloria di Dio ed in onore del vostro santo Fondatore, porgo a vostra paternità e a tutta la Comunità religiosa i miei deferenti ringraziamenti ed ossequi, con i quali mi onoro confermarmi

di Vostra Paternità Rev.ma
dev.mo

Sac. LUIGI MARINELLI
Off. S. Congr. per le Chiese Orientali

* * *

Roma, 21. 10. 1977

La ringrazio per avermi inviato l'invito alla commemorazione del terzo centenario della nascita del Ven. Abate Mechitar, Fondatore della Sua Congregazione.

Mentre Le porgo le mie più vive congratulazioni, vorrei scusarmi se mi sarà impossibile partecipare a detta commemorazione.

Con fraterni saluti nel Signore

ENRICO SYSTEMANS, SS. CC.
Segretario Generale
dell'Unione dei Superiori Generali

* * *

Roma, 21. 10. 1977

Impossibilitata, causa forza maggiore, intervenire solenni celebrazioni terzo centenario nascita nostro Venerabile Abate Mechitar, assicuro partecipazione gioiosa, fraterna, intera Comunità, et giornata in unione preghiera.

Madre BENIGNA DER-GHAZARIAN
per la Superiora Generale
delle Suore Armene
dell'Immacolata Concezione

Իւսփիտար, 23 Փետր. 1976

Գալֆայեան Ուխտի Միաբանութիւնս եւ Հաստատութեանս ինքնամակալութիւնը հաճոյքը ունին ողջունելու հայութեան մշակոյթի օղտաշատ եւ պատուաբեր կոթողներէն, Ս. Ղազարու վանքին Երանաշնորհ Հիմնադրին Մեծն Մխիթար Արքահօր ծննդեան երեքհարիւրամեայ փառաւոր յորեկեանը:

Արժանաւայել այս հանդիսութեան առիթով վը մաղթենք ի սըրտէ, որպէսզի ինչպէս ցարդ, յետ այսու ալ արժանի ըլլաք արդիւնաւոր շրջաններ բոլորելու, ի մխիթարութիւն եւ ի փառս մեր սիրեցեալ Աղդին:

Այս պատեհութեամբ անդամ մըն ալ կրկնելով մեր իղձերն ու մաղթանքները...

Զեյրդ խոնարհ աղախին
Աւագ Սրկ. ԱՐՈՒՍԵԱԿ Մյրպտ. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մայր Գալֆայեան Աղջ. Ազգ. Որբանոցին

* * *

S. Zenone degli Ezzelini, 17. 10. 1977

Mille grazie per l'invito a venire a Venezia sabato 22 c. m. per la solenne commemorazione del Ven. Abate Mechitar.

Ma mi è impossibile ad essere presente, data la mia poca salute. Sarò presente con il cuore e la mia povera preghiera.

Porgo i miei rispettosì ossequi a V. Ec.za Rev.ma e a tutta la Comunità.

Dev.mo
Mons. ANGELO FRACCARO

* * *

Roma, 14. 10. 1977

A nome del Rev.mo Signor Protonotario Apostolico Prof. Dott. Giorgio Schwieder si ringrazia per il gentile invito in occasione della commemorazione del terzo Centenario della nascita del Ven. Abate Mechitar.

Il Signor Protonotario rammaricandosi per non poter partecipare, augura un felice esito della commemorazione.

Con distinti ossequi

Il segretario

* * *

Castelmonte (UD), 1° nov. 1977

Quantunque un po' in ritardo, mi unisco alla gioia della Congregazione per le feste del terzo centenario della nascita del Servo di Dio Venerabile Mechitar.

... Ho letto con simpatia le belle parole del Cardinale per la unione dei cristiani e del Pontefice Paolo VI. Spero che questa celebrazione centenaria sia di aiuto alla causa di beatificazione di questo grande Servo del Signore.

Dev.mo
P. VENANZIO RENIER
Cappuccino

* * *

Lido - Venezia, le 19 Ottobre 1977

Nous sommes heureuses de Vous féliciter à l'occasion du 3^e centenaire de la naissance du Serviteur de Dieu Abbé Mekhitar. Nous nous unissons à Vos actions de grâces. Vous êtes toujours si bons pour nous! Le dévouement de vos bons Pères est bien apprécié. Ils officient avec tant de piété.

Nous demandons que votre Congrégation continue à donner de la joie au Bon Maître par son amour, sa fidélité et sa charité.

Nous prions avec vous pour que votre cher Père Fondateur soit élevé aux honneurs des autels.

Daignez agréer, mon très Rév. Père, nos plus respectueuses félicitations et l'assurance de nos prières à toutes Vos intentions.

MARIE BERTILLE DE JESUS
Supérieure des Filles du Cœur de Jésus

* * *

Venezia, 22. 10. 1977

Partecipiamo spiritualmente bella festa, invochiamo grazie celesti loro Famiglia religiosa.

SUORE SALESIE CATECUMENI VENEZIA

* * *

Roma, 21. 10. 1977

Impegnato altrove attività Governo, pregoLa scusare mia assenza a commemorazione nascita Ven. Abate Mechitar. Invio molto cordialmente saluti.

COSTANTE DEGAN
Sottosegretario Stato Trasporti

Venezia, 22. 10. 1977

Bene augurando per attività Ordine, invio molti fervidi auguri, spiacente non poter partecipare a commemorazione terzo centenario nascita Ven. Abate Mechitar.

Devotamente
DOMENICO CACOPARDO

Vice-Presidente Magistrato Acque, Venezia

* * *

Venise, le 25 Octobre 1977

J'ai bien reçu en son temps votre aimable invitation me demandant de participer aux cérémonies commémorant le tricentenaire de la naissance du Fondateur de votre Congrégation, l'Abbé Mekhitar.

Malheureusement, retenu par d'autres obligations reçues antérieurement, je n'ai pu être des vôtres et je le regrette vivement.

Soyez cependant assuré, Monsieur l'Abbé Général, de l'intérêt que je continue à porter à votre Congrégation, tant en mon nom personnel qu'en ma qualité de représentant de la République Française et recevez l'expression de ma considération très distinguée.

A. TRONC
Consul Général de France
à Venise et Trieste

* * *

Venezia, 23. 10. 1977

A nome «Fondazione Giorgio Cini» et personalmente unisco mi esultanza generale et formulo auguri fervidi, scusandomi ancora per forzata assenza cerimonia Domenica.

VITTORE BRANCA
Presidente Fond. Giorgio Cini

* * *

Venezia, 20. 10. 1977

Causa precedenti numerosi impegni impossibilitato intervenire commemorazione Abate Mechitar, mi scuso e ringrazio invito, con calorosi infiniti auguri.

Prof. PAOLO PERUZZA

Փարիզ, 28 Հոկտ. 1977

Արկածի մը հետեւանքով, ի վիճակի չըլլալով նոյնիսկ հեռագիր մը խմբագրել ու Ձեզի ուղղել, բարեկամի մը բարի կամեցողութենէն կ'օգտուիմ այսօր մեր Հանդէսին կողմէ Ձեզի ներկայացնելու մեր ջերմագին շնորհաւորութիւնները Ձեր փառապանծ Միաբանութեան հիմնադիր Մխիթար Արքայապետ ծննդեան երեքհարիւրամեակին առթիւ:

Կը մաղթեմ որ Իրեն յաջորդները շարունակեն, նոյն եռանդով, սկստած գործունէութիւնը, ի փառս հայկական հետազոտութեանց:

Խորին յարգանքով

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆ

Խմբագրութեան Քարտուղար
Revue des Etudes Arméniennes
Համլէսի

* * *

Paris, 20. 10. 1977

Remercions votre invitation. Présentons respectueuses félicitations pour commémoration tricentenaire notre Vénéré Fondateur Mehkitar.

Com. ZADIG KHANZADIAN

* * *

Paris, 20. 10. 1977

Sommes en pensée Saint-Lazare, pour honorer mémoire Bienheureux Mekhitar, féliciter Congrégation, prodigieux services rendus Culture arménienne.

Prof. FR. FEYDIT

* * *

Երեւան, 20 Հոկտ. 1977

Սրտագին շնորհաւորում եմ 18րդ դարի Հայ դրական վերանորոգիչ շարժման հիմնադրի եւ տեսաբանի՝ Լուսանորոգչ Մխիթար Սեբաստացու ծննդեան 300ամեակի առթիւ: Խոնարհում եմ Միաբանութեանդ դարաւոր վաստակի առաջ: Համբուրում եմ Մեծ Սեբաստացու շիրմաքարը:

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ
Բանասիրական Գիտութիւնների Դոկտոր

Պոլիս, 17 Հոկտ. 1977

Մեծ ուրախութեամբ ստացայ Մխիթարեան Միաբանութեան հրաւերը՝ պաշտօնական ու հանդիսաւոր այն արարողութեանց, որոնք տեղի պիտի ունենան Վրկնակ տօնակատարութիւններով, 22-23 Հոկտեմբերին, Մխիթարեան Ուխտի հիմնադիր Երջանկայիշատակ Մխիթար Աբբաճօր ծննդեան 300ամեակին առթիւ:

Սրտազին շնորհակալութիւններ անձիս հանդէպ Ձեր ցոյց տուած ազնիւ զգացումներուն համար: Կը մաղթեմ սրտանց՝ որ յաւէտ ծաղկեալ մնայ Մխիթարեան մեծ ընտանիքը, իր անփոխարինելի Հիմնադիրին ճամբուն եւ ուղղութեան վրայ:

Հաճեցէք ընդունիլ խոր յարգանքներս ու անխառն զգացումներս:

ՍԻՐԱՐՓԻ ՏՈՒՆԱՆԵԱՆ

Տնօրէնուհի Մխիթարեան վարժարանի
(Շիշլի - Իսթանպուլ)

* * *

Նիֆոսիա, 29 Հոկտ. 1977

Երանաշնորհ Մխիթար Աբբաճօր ծննդեան երրորդ դարադարձի ոգեկոչումի հանդիսութեան հրաւերը դժբախտաբար այսօր միայն ստացայ, այլապէս շատ պիտի փափաքէի հեռադրով մը մեր մասնակցութիւնը բերել հանդիսութիւններուն:

Պիտի խնդրեմ որ այս երկտողը ընդունիք իբր շնորհաւորական արտայայտութիւնը Մելիքեան Կրթական Հաստատութեան տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան:

Կը մաղթեմ նաեւ որ Մխիթար Աբբաճօր ողին տեւապէս սաւառնի Մխիթարեան Միաբանութեան վերեւ, որպէսզի ան շարունակէ իր աղօթողութիւնը:

Յարգանք՝

Ս. ՊԵՏԻԿԵԱՆ

Տնօրէնուհի Մելգոնեան Կրթ. Հաստատութեան

* * *

Vicenza, 25 ottobre 1977

Desidero ringraziarLa vivamente anche per iscritto per la cortesia che ha voluto riservarmi invitandomi alla commemorazione del terzo centenario della nascita del Fondatore della Congregazione.

Ella conosce il mio attaccamento verso le tradizioni dei Padri Mechitaristi e la mia gratitudine per l'insegnamento ricevuto nelle scuole della Congregazione; l'invito ricevuto mi ha per-

messo di incontrare nuovamente indimenticabili maestri e carissimi compagni di studio, rievocando comuni ricordi.

Ancora Le confermo la mia soddisfazione per aver potuto presenziare — assieme a tanti altri estimatori — alle solenni cerimonie che hanno giustamente esaltato l'opera del Fondatore e quella saggia e lodevolissima dei suoi continuatori.

Con molta stima e devozione mi abbia

Suo

VAHAN PASARGIKLIAN

Consigliere Direttore Generale
della Banca Cattolica del Veneto

* * *

Neuilly, le 12 Octobre 1977

C'est avec gratitude que nous avons reçu, mon épouse et moi-même, la bienveillante invitation que votre Excellence a eu la délicate attention de nous adresser pour la célébration officielle du tricentenaire de la naissance de l'Abbé Mekhitar au Palais des Doges.

Nous Vous en remercions de tout cœur.

Comme nous aurions voulu être présents à cette fête de la famille spirituelle qu'est pour nous, depuis plus de deux siècles et demi, l'Ordre de Mekhitar!

Malheureusement, il nous sera impossible de nous trouver à Venise pour cette commémoration et cela constitue pour nous une grande privation.

Nous Vous suivrons par la pensée et par la prière, pour demander que l'œuvre du glorieux et saint Fondateur de l'Ordre continue à porter ses fruits de foi, de sagesse et de civilisation.

Je Vous prie, Excellence, d'agréer avec nos regrets réitérés, l'expression renouvelée de tout le fidèle attachement qui accompagne notre profond respect.

CHRISTIAN DEDEYAN

* * *

Alep, 23. 10. 1977

Félicitons jubilee Mekhitar. Souhaitons nouveaux succès dans la voie lumineuse notre glorieuse culture trimillenaire.

ZAVEN SABOUNDJIAN
Hamazkaïne

Alep, 22. 10. 1977

Occasion troisième centenaire naissance Révérend Père Mekhitar, vous présentons chaleureuses félicitations avec sincères vœux prospérité.

UNION GEN. ARM. BIENFAISANCE (SYRIE)

* * *

Alep, 20. 10. 1977

With pleasure we share in the closing festival the three hundred anniversary of the Great Abbot of wishing the worthy Community new horizons and new successes.

Dr. KH. TOUCHMANIAN
President of Gilikian Chrtchanag

* * *

Marseille, 22. 10. 1977

L'Association des Anciens Elèves de Marseille du Collège Arménien Moorat-Raphaël vous remercie très vivement à votre invitation à la commémoration du 3^e centenaire de la naissance du Serviteur de Dieu l'Abbé Mekhitar. Elle s'associe de tout cœur à cette célébration et vous assure de toute sa fidélité à l'esprit de l'œuvre accomplie par l'Abbé Mekhitar et qui est poursuivie par la Congrégation.

NOUBAR PAPAIZIAN
Président de l'Ass. Anciens Elèves

* * *

Lausanne, 22. 10. 1977

La Jeunesse Arménienne de Suisse remercie et se sent honorée de votre invitation pour la commémoration du 300^e anniversaire de la naissance de l'Abbé Mekhitar Fondateur de votre Congrégation. Le rôle de l'Abbé Mekhitar et de la Congrégation Mekhitariste dans la vie culturelle des Arméniens a été déterminante dans l'épanouissement de notre Nation. Nous sommes sûrs que votre Congrégation s'inspirant de l'exemple du Père Mekhitar continuera comme dans le passé à remplir son rôle historique au sein de notre peuple.

ARDEN SELLEFYAN
Président du Comité Jeunesse Arménienne
de Suisse

Փարիզ, 20 Հոկտ. 1977

Մխիթար Աբբազօր ծննդեան երրորդ հարիւրամեայ ոգեկոչման առթիւ, հաճեցէք ընդունիլ Մարի-Նուպար Հիմնարկութեան՝ Տնօրէնութեան եւ ուսանողութեան ջերմ գգացումներու հաւաստիքը: Թող Ս. Ղազար Կղզին շարունակէ իր սրբազան առաքելութիւնը ի փառս Ազգիս Հայոց:

Մնամ յարգանքօք

ԶԱԻԷՆ ԵԿԱԻԵԱՆ
Քարտուղար Հայ Ուսան. Տան

* * *

Թեօֆէֆս - Ժըմեւ, 17 Հոկտ. 1977

Երնչ. Մխիթար Աբբազօր ծննդեան 300ամեակի ոգեկոչումի տօնակատարութեանց առիթով - որոնց, աւա՛ղ, պիտի չկարենամ ներկայ ընձալ՝ այստեղ ունեցած իմ պարտաւորութիւններուս պատճառով - կը փութամ Ձեզի ներկայացնել իմ ջերմ մաղթանքներս՝ Մխիթարեան Ուխտին բարգաւաճումին եւ անոր միշտ ազգազուտ ձեռնարկներուն յաջողութեանը:

Որդիական խորին յարգանքներով՝

Ճրտ. Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

* * *

Թրիէսթէ, 11 Հոկտ. 1977

Սնհուն գոհունակութեամբ ստացած եմ Ձեր ազնիւ հրաւիրագիրը, Երնչ. Մխիթար Աբբազօր ծննդեան երրորդ գարադարձի ոգեկոչման հանդէսին:

Ո՛րքան պիտի փափաքէի ես ալ ներկայ գտնուիլ, սակայն ցաւ ի սրտի կը յայտնեմ թէ յառաջացած տարիքիս (90 տարեկան) պատճառաւ՝ ստիպուած եմ չհեռանալ Թրիէսթէէն:

Հաճեցէք ընդունիլ սրտազին ողջոյններս եւ շնորհաւորութիւններս վերոյիշեալ հանդէսին առթիւ:

Մնամ միշտ յարգանքօք՝

ՎԱՀԷ ԶԻՆՃԻՐԵԱՆ

* * *

Milano, 22. 10. 1977

Spiacenti non poter intervenire celebrazione Palazzo Ducale, siamo con Voi in questa ricorrenza et inviamo fervidissimi auguri Padre Abate e tutti Padri Mechitaristi.

Famiglia SERAPIAN

Milano, 21. 10. 1977

Presente con pensiero alla fausta cerimonia, auguro alla Congregazione altri gloriosi centenari.

ARMINE SIRABIAN e Famiglia

* * *

Venezia, 21. 10. 1977

Pertecipo in ispirito alle celebrazioni per il terzo centenario della nascita dell'Abate Mechitar, con vivissimi auguri.

Prof. GINO FLETZER
Commissario Regionale

* * *

Venezia, 31. 10. 1977

Ringrazio vivamente dell'invito alle cerimonie di commemorazione del terzo centenario della nascita del Ven. Abate Mechitar; mi rincresce che a causa della mia avanzata età non vi ho potuto assistere.

PRINCIPE CLAY

* * *

Venezia - Aviano, 22. 10. 1977

Impossibilità partecipare, ringrazio per graditissimo invito con fervidi auguri.

GIANFRANCO DELLA PUPPA
Dir. Banca Friuli Aviano

* * *

Asolo, 23. 10. 1977

Per inattesi imprevisti impossibilitato presenziare celebrazione, ringraziamenti et saluti con sinceri auguri.

Dott. ALESSANDRONE

* * *

Venezia, 18 ottobre 1977

Ho ricevuto il cortese invito che V. R. ha voluto inviarmi per la commemorazione del terzo centenario della nascita del Ven. Abate Mechitar, Fondatore della Congregazione.

Con mio vivo rammarico non potrò esser presente perché parto il giorno 20 p. v. per l'estero.

Mi scusa pertanto per l'assenza, grato se vorrà ricordarmi in altre occasioni.

Voglia, Ecc.za Rev.ma, accogliere, sensi del più devoto ossequio.

Dott. CARLO PALUMBO - FOSSATI

* * *

Torino, 22. 10. 1977

Impossibilitato essere presente celebrazione terzo centenario nascita Abate Mechitar, prego scusare mia assenza. Assicuro più che mai mia presenza spirituale accanto a Lei e tutti i cari Padri, in questa gioiosa circostanza.

D. GALLETTO

* * *

Venezia - Lido, 16. 10. 1977

Sono spiacente di non poter accettare il suo cortese invito per motivi professionali.

La ringrazio e Le porgo deferenti saluti, con sentiti auguri.

Dott. CAMILLO LOBETTI BODONI

* * *

Makriyanni (Athènes), 21. 10. 1977

Nous sommes avec cœur parmi vous.

Fam. MANOUKIAN

* * *

Alep, 22. 10. 1977

Regrette avoir manqué cérémonies et présente meilleurs vœux pour bonne continuation œuvre sacrée Abbé Mekhitar.

MELKON TERJANIAN

* * *

Հոռմ, 13 Հոկտ. 1977

Մեծ հանդէսին չկարենալով մասնակցիլ անձնապէս, կը ներկայացնեմ ջերմագին շնորհաւորութիւններս:

SALVATORE BARBAGALLO

* * *

Թորինյ, 14 Հոկտ. 1977

Շատ շնորհակալ եմ Ձեր հրաւերին համար: Մեծ հաճոյքով պիտի մասնակցիմ Մխիթար Արքաւոր ծննդեան 300ամեակին առթիւ կազմակերպուած հանդէսներուն փակման արարողութեանց:

Յարգալից բարեւներով ու լաւազոյն մաղթանքներով՝

ՅԱԿՈՒ ԹԱՇՃԵԱՆ

Նիւ Եոթ, 26 Դեկտ. 1977

Ձեր կողմէ Երանաշնորհ Մխիթար Արքաճօր ծննդեան երրորդ դարադարձի ոգեկոչումի կապակցութեամբ մեզի ուղարկուած հրաւերը մեր ձեռքը հասաւ միայն մի քանի օր առաջ:...

Կ'ուզենք, սակայն, այս պատեհութիւնը օգտագործել մեր ջերմ շնորհաւորութիւնները ներկայացնելու Միաբանութեանը բոլոր անդամներուն՝ բարեբաւտիկ այս առիթով: Միեւնոյն ժամանակ կ'ուզենք մաղթել որ Միաբանութիւնը, ինչպէս անցեալին, ապագային եւս շարունակէ ազդօղուտ իր դործունէութիւնը, հետեւելով Մխիթար Արքաճօր ուղիին:...

Խմբագրութեանս կողմէ Ձեզի կը ներկայացնենք մեր լաւագոյն մաղթանքները:...

Խոնարհաբար՝

ԷՏՈՒԸՐՏ Խ. ՊՕՂՈՍԵԱՆ

Խմբագրապետ

THE ARMENIAN REPORTER

Շաբաթաթերթի

* * *

Bourgas, 19.10.1977

Fervidi voti e felicitazioni per la solenne commemorazione.

GARO GIOBOIAN

* * *

Bordighera, 15.10.1977

Dio onnipotente benedica Italia, Armenia, Venezia e Mechitar, per suo trecentesimo natalizio.

HOVSEP KASCANDILIAN

* * *

Մարտիլիա, 20 Հոկտ. 1977

Մօրս լեզուն շողակաթ սորվեցուցիր ինձի դուն,
Խաւարին մէջ երբ ինկած էի, ըսիր. Բարձրացի՛ր,
Ինչո՞ւ ապրիլ անօդուտ, անմիաբան, ցանուցիր.

Թարգման եղիր լսեմին, քալէ լոյսին՝ օրն ի բուն,
Արեւին պէս, աստղերուն, Արարատին ձիւնապատ:

Բարուն 'եւ Հա՛յր, կ'ուզէի ամէնուրեք, յաւիտեան,

Երախտապարտ մնալ քեզ՝ արչալոյսի մը նման:

ՖԵՐԱՊ

(Հեռագիր)

(Ֆերտի Ապառնեան)